տանում ագարակից ամբարցված պեծաներին ու թարր-տում.

Ամեն գյուղ կամ շրջան, նայած տեղի բնական պայմաններին, ջրի հոսանքի առկայությանը կամ ստեղծած հարմարություններին, իր միջավայրին համապատասխան ձևեր և միջոցներ էր ստեղծել, այնպես որ մի տեղ օգտագործված ձկնորսության միջոցները մի ուրիշ տեղի համար անպետք էին համարվում։

Ձկնորսությունը կատարվում էր համագործակցության ձևով և որսը բաժանվում մասնակիցների միջև հավասար կերպով.

## ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Ելնելով տեղի յուրահատկություններից, ներկայացվող զբաղմունքները կարելի է բաժանել երեք կարգի՝ վարչական կենտրոնների (շրջկենտրոններ) զբաղմունքներ, հումք ունեցող շրջանների զբաղմունքներ, պահանջի համաձայն շրջուն տնայնագործներ կամ արհեստավորներ։

Շրջկենտրոններից ամեն մեկը թեև ուներ վարր արձանագրվելիք արհեստների գրեթե բոլոր տեսակները, բայց որոշ վայրերում կային առանձնահատկություններ այսինչ կամ այնինչ տնայնագործական զբաղմունքի կամ արհեստի բնագավառում։ Այսպես, Բալուի շրջանի գյուղատնտեսությունը իր շրջկենտրոն Բալու գյուղաքաղաքով, ավելի շատ՝ Բալահովտի բնակչության որոշ տոկոսը հայտնի շինարարներ և վարպետներ (գալֆա) էին։ Բալուցի գալֆաների անունը և համբավը տարածված էր իր սահմաններից դուրս. Պոլսո, Իզմիրի կամ Բուրսիայի գլխավոր այլ քաղաքների պալատների, մզկիթների, եկեղեցիների, բաղնիքների և կամուրջների կառուցողները մեծ մասամբ բալուցիներ էին։ Բալուցի շինարարների արհեստը ժառանգական էր, կարելի է ասել, թե առանց որևէ հիմնական կրթության և առանց ճարտարապետական վարժարանների օգնության բալուցի ստեղծագործողը ի ծնե ճարտարապետ էր։

Ամեն շրջան, առավել կամ նվազ, զբաղվում էր կավե ամաններ պատրաստելու տնայնագործությամբ, բայց այս բոլորի մեջ Չարսանջակը իր կենտրոնական գյուղաքաղաք Բերիով առանձնահատուկ տեղ էր գրավում։ Բերիի կավե ամաններն իրենց գեղեցկությամբ, տոկունությամբ, որակով, նրբությամբ և բանակով գերազանցում էին շրջանի բոլոր արտադրությունները։ Այս գործն այստեղ անցնելով տնայնագործության սահմանները, դարձել էր արհեստ բրուտության և ապրելու միջոց։ Չարսանջակի ջրի կժերը, փարչերը և գինու կարասները այնպիսի հատկություն ունեին, որ ջերմությունը վանում և իրենց մեջ լցված ջուրը կամ գինին ամենատաք ժամանակներն անգամ սառնորակ էին պահում, դրանք հախճապակե ամանների նման զրնգուն ձայն էին հանում։

Բոլոմորիի և Ղըզըլքիլիսեի շրջանները հանրածանոթ էին փայտամշակության ասպարեզում։ Այստեղ պատրաստած տեփուրները, գոչերը, տաշտերը, ջրաղացի ջրի խողովակները և զանազան տնային կամ երկրագործական գործիքներ գերազանցում էին մնացյալ շրջանների նույն տիպի արտադրությունները և մրցում բոլորի հետ։

Մասնակի այս մեջբերումներն արվեցին այն պարզ պատճառով, որ կանգ չառնվի ամեն մի շրջկենտրոնի կամ գյուղի վրա առանձին, մյուս կողմից ասելու համար, թե բնականորեն որևէ շրջանի արտադրական հումքի գոյության փաստը առիթ և մղում էր ավել համապատասխան տնայնագործական ճյուղի զարգացմանը։ Այսպես, Բալուի բնտիր քարհանքերը հրապուրել էին բալուցի կառուցողներին դառնալու քարտաշներ, պատ շարողներ և գալֆաներ։ Չարսանջակի բնտիր և որակյալ կավի առատ հումքը առիթ էր ավել անոթին կավամաններ պատրաստող տնայնագործին ավելի սերտորեն կապվելու կավին և նրա միջոցով նվաճելու բրուտության արհեստը։ Ղըզըլքիլիսեի և Բոլոմորիի կույս անտառների բազմատեսակ ծառերը ներշնչել և հրապուրել էին այդ շրջանների սահմանափակ տնայնագործությունը վերածել փայտամշակման արհեստի։

Դերսիմի բարձրավանդակի գյուղերում տնայնագործներ կային, բայց բառի լայն իմաստով արհեստավորներ, շատ տեղերում նույնիսկ դարբին կամ պայտար չկար։ Արհեստավորները կենտրոնացած էին առավելապես վարչական կենտրոններում, որոնք գրեթե չէին տարբերվում մեկը մյուսից։

Վարչական կենտրոններում գոյություն ունեցող արհեստներն էին՝ պղնձագործություն, դարբնություն (երկաթագործություն), դերձակություն, պայտարություն, զինագործություն (զենքեր նորոգողներ, սուր, թուր և դանակներ շինողներ), կլայեկագործություն (ղալայճի), կոշկակարություն (եմենիճի, հնակարկատ, փինաճի), թաղիքագործություն, համետագործություն (սամերճիներ և փալանճիներ), ատաղձագործություն, թիթեղագործություն, կաշեգործություն (կյոնճիներ, դաբախներ), փայտամշակություն, կավագործու-

թյուն (բրուտների աշխատանք), ոսկերչություն և ժամագործություն, ոսկրի և եղջյուրի վերամշակում, մազմանություն, ոստայնագործություն, ձիթհանություն, սափրչություն։

Շրջկենտրոնների արհեստների կամ տնայնագործության շարքից դուրս թողեցինք գորգագործության, բրդի վերամշակման և մի շարք այլ տնայնագործական ճյուղերը, որոնք առավելապես լեռնային գյուղերի գլխավոր զբաղմունքն էին, քան թե քաղաքի։

**Պղնձագործություն**: Բոլոր արհեստների մեջ առաջին տեղը գրավում էր պղնձագործությունը։ Սա առավելապես գտնվում էր հայերի ձեռքում։ Բնիկները կամ կենտրոնական քաղաքներից եկող արհեստավորները Խարբերդից, Տիգրանակերտից, Երզնկայից և նույնիսկ Կարինից բերված պղնձե սալիկներից տեղում պատրաստում էին կաթսաներ (կատսա, խալկիններ, թրք.՝ ղազան), սաներ, ափսեներ, սինիներ (կերակրի մատուցման համար), սիթիլներ (փարխաչ), կյուկյումներ, լականներ, կերակրի մեծ ու փոքր ամաններ, թասեր, սկավառակներ, բաժակներ, կոնքեր, ջրածիկներ (ըպրըգ) և տնային զանազան այլ իրեր։

Պղնձագործի աշխատանոցում օգտագործված ամենագլխավոր գործիքները շատ նախնական էին՝ փուքս, սալ, երկաթե և փայտե մուրճ, ունելի, կտրոց, պողպատե սրածայր դուր, ծակող կլոր րիզ, երկաթե կլոր լծակ և այլն։

Արտադրանքի գլխավոր հիմքը մարդկային ուժն էր, զորավոր աչքը, ուժեղ բազուկը, փայտե կլոր մուրճի ուղիղ հարվածը և հմտությունը։

Միևնույն արհեստին պատկանող արհեստավորները համախմբված էին միևնույն հրապարակում կամ շուկայում, մեկը մյուսին կից կրպակներում կամ փոքր խանութներում։

Պղնձյա ամանները ծաղկազարդված էին զանազան գծանկարներով՝ թռչունների, եղնիկների, ձկների նկարներով, որոնք նրբությամբ փորագըրված էին պողպատե սրածայր դուրի օգնությամբ։

Պղնձագործության պաշտպան և հովանավորող սուրբը Պողոս-Պետրոսն էր, որի անվանակոչության տարեդարձի օրը տոն էին համարում և չէին աշխատում։

**Դարբնություն**: Դարբնի աշխատանոցի գործիքները հետևյալներն էին՝ փուքս կամ փքոց՝ կրակը արծարծելու, սալ և գնդան՝ շիկացած երկաթը ծեծելու և պահանջված ձևը տալու, ունելիներ՝ շիկացած երկաթը կրակից հանելու, կտրիչներ և սեղմիչներ (մենկենե), մեծ և փոքր մուրճեր՝ երկաթը ծեծելու (կռան, վայող) համար և այլն։

Այստեղ էլ աշխատանքի գլխավոր հիմքը մարդկային ուժն էր, տոկուն մեջքը, ուժեղ բազուկները, սրատես աչքը և այլն։

Դարբնոցում պատրաստում էին տնային և երկրագործական զանազան գործիքներ՝ մանգաղ (մանկաղ), գերանդի (գերնտու՝ թրք.՝ գելենդի, թրք.՝ թըրփան), խոփ, փութ, դուր, շղթա, քար ճեղքելու սեպ, երկանքաքարի կռան, զանազան մեծությամբ մուրճեր, կացին, փետատ, ուրագ, հոտոց, կոփկ, խաչերկաթ (խաճիրկաթ), ոտնուրագ, քար տաշելու կացին, տրմրղ (հնձված խոտը հավաքելու) և զանազան երկաթե մանր առարկաներ։

**Դերձակություն**: Սա թեև դուրս էր եկել տնայնագործության սահմաններից և դասվել արհեստների շարքը, բայց լեռնաշխարհի հայ և քուրդ բնակիչները, պահելով նախնադարյան տարազի ձևն ու գործածությունը, իրենք էին գործում, ձևում ու կարում տան անդամների հագուստները, այնպես որ շրջկենտրոններում գործող դերձակներին չէր կարելի համեմատել ավելի մեծ կենտրոնների իրենց արհեստակիցների հետ։

Խարբերդ, Երզնկա, Կարին և Տիգրանակերտ քաղաքներում աշխատող դերձակներին կարելի էր համեմատել նույնիսկ Պոլսո և Իզմիրի իրենց արհեստակիցների հետ և կատարված աշխատանքն անվանել դերձակություն, մինչդեռ Դերսիմում, նույնիսկ շրջկենտրոններում գոյություն ունեցող դերձակությունը մնում էր նախնական վիճակում, տեղ-տեղ նույնիսկ կարի մեքենաներ չկային և աշխատանքը կատարվում էր ձեռակարով։

Շրջկենտրոններում գործող դերձակների մեծամասնությանն անծանոթ էր եվրոպական հագուստների կարն ու ձևը, նրանց կարած հագուստները մեծ մասամբ դուրս չէին գալիս տեղական տարազի սահմաններից։ Առավելապես կարում էին աղաների, բեկերի, աշիրապետների և տեղական պաշտոնեության համար։

Պահելով տարազի տեղական ձևը և օգտագործելով տեղական արտադրանք եղող բրդեղենի, մանուսայի և ղութնիի գործվածքները, կարում էին դեղեքի, ելեկ, շալվար, կաշվե կիսավերարկու, էնթարի և համապատասխան ներքնազգեստներ՝ իշլիկ, շապիկ և այլն։

Ի տարբերություն գյուղական տնայնագործների կարած հագուստների, շրջկենտրոնում կարված հագուստները ծաղկազարդում էին սրմաթե-

լերով և արծաթե կոճակներով։ Նայած հագուստ կարել տվողի դիրքին և հարստությանը։ Օգտագործում էին կենտրոնական քաղաքներից բերված բնաիր կերպաս՝ առևտրական բաց կապույտ, գոց կապույտ, բաց ու գոց կանաչ գույնի։ Ղայթանով բանված և արծաթելով աշխատված ու ծաղկազարդված այս հագուստները չուխա-չալվար էին կոչվում, որ նշանակում էր չուխայից կարված շորեր։ Չեկը և շալվարը միասին մի լրիվ հագուստ էր։

Դուքնին մանուսայից ավելի բնաիր կտորն էր, որի հենքի և գործի թելերը մետաքսախառն ու բամբակախառն էին։ Գունավոր թելերով այս գործվածքի կենտրոնն Արաբկիրն էր։

Դուքնից հագուստները կարում էին մեծահասակների, տղաների և բեկերի կանանց համար, որոնք իրենց դուքնի-դումաշ հագուստներով տարբերվում էին հասարակ կանանցից։

Եթե տղամարդիկ նախապատվություն էին տալիս կապույտ կամ կանաչ գույներին, ապա կանանց հագուստների համար օգտագործված կտորների մեջ ցոլացուն կերպով աչքի էին զարնվում վառ գույները, ոսկեգույնը, որմա-արծաթագույնը, ալ-կարմիրը, գոց կարմիրը (տորոն) և կանաչը։

Ընդհանրական բնույթ էր կրում բրդի և այծի մազի մշակությունը, հումքի այդ տեսակներից արտադրված թելերի ու հյուսքի պատրաստումը։ Դերսիմում ապրող ամեն մի տնտեսություն, հայ թե քուրդ, ինքն էր խուզում ոչխարի բուրդը, այծի թիֆթիկն ու մազը, տեսակավորում հումքը, նախապատրաստում համապատասխան վերամշակման։

Բուրդը նախ լվանում, չորացնում, ապա գզում էին մանվելիք, թաղիքի համար օգտագործվելիք, անկողինների պատրաստության համակցվելիք մասերը։ Լվացված երկար բուրդը սանդերով սանրում, իլիկով մանում, բարմանով ոլորում, թելը (բրդաթելը) իլիկների կամ կարժերի փերածում, ներկվելիքները ըստ պահանջի զանազան գույներով ներկում և պատրաստում էին համապատասխան գործվածքների կամ հյուսքի օգտագործման համար։

Սանդերով բուրդը գզելու աշխատանքը կատարում էին առավելապես չափահաս և փորձառու կանայք, բուրդը մանում և ոլորում էին ավելի տարեցները, իսկ բուծը (գուլպա), թաթպանը, առմաթլոցուկը, գլխին առնելիք կամ մեջքին կապվելիք շալը հյուսում և գործում էին երիտասարդ աղջիկներն ու հարսները։

Գյուղացի աղջիկը դեռ փոքր հասակից վարժը-վում էր գուլպա հյուսելու, թաղիքի նախշելու, իլիկ (կոճակի ծակի անցք) անելու, կոճակ շինելու, փեսացուի շապիկի և ինչիկի օձիքները թելերով ծաղկազարդելու և սամեկաղ հյուսելու աշխատանքներին. ամեն մի աղջիկ ինքը հյուսելու և կամ նախշելու էր հարսնության ժամանակ որպես օժիտ (ճիհեզ) իր հետ տանելիք նվերները։

Կտորեղենի կամ հյուսված հագուստների վրա կոճկելու համար ծակեր բաց չէին անում, այդ արվում էր իլիկով, որը ղայթանի ձևով հյուսված և հագուստին համապատասխան գույն ունեցող նուրբ հյուսք էր։

Ինչպես իլիկի հյուսքը, նույնպես և կոճակը պատրաստվում էր թելերից։ Նայած կոճակի մեծությանը, օգտագործում էին կորիզներ, նույնիսկ համաչափ բիլուրի (ոլոռ) հատիկներ, որոնց շուրջը հյուսում էին գունավոր կամ միագույն բրդե թելով, կոճակից դուրս ձգված փոքր պոչիկը կարով ամրացնում էին հագուստին։

Տղամարդոց արտահագուստի համար գործված բրդե կտորեղենը, մեջքի գոտին, կանանց կրծկալները, ծերերի գոգնոցները, պարանները հյուսվում էին մասնագետ կանանց կողմից. ամեն տուն ուներ իր մասնագետը՝ դեռ աղջկությամբ վարժված այդ գործին։

Տնայնագործության նույն ճյուղին պատկանող մի շարք գործվածքներ կրում էին մասնագիտական բնույթ, դուրս էին մնում առօրյայի սահմաններից և արհեստի կարգն էին դասվում։ Դրանք էին՝ գորգագործությունը, կապերտի (կարպետ), ռեռխի, ծաղկուն բարձերի, խարարների, խուրջինների և թաղիքի պատրաստումը։ Նման մասնագետներից դուրս գյուղերը իրենց պահանջները լրացնում էին մասնագետների հետ փոխադարձ համաձայնությամբ, տալով գործվածքի համար, այսինքն՝ ներկված թելը, այն համեմատությամբ, որ գործողը որպես գործոցներ ստանար գործվածքի ծանրության կրկին չափով հումք, այսինքն՝ եթե գործվելիք գորգը կամ կապերտը կշռում էր 10 կգ, ապա գործել տվողը գործողին տալու էր 20 կգ պատրաստի հումք, որի 10 կգ եթե ծախսվում էր գործվածքի վրա, մնացորդ 10 կգ ներկված թելը գործողի աշխատավարձն էր։ Այս գործարքին ասում էին՝ մեկ բեզի, մեկ ինձի։

Գորգագործությունը համահավասար մասնագիտություն էր պահանջում գոգնոցի նախշուն գոգնոցկապի գործվածքը (կապագործ), որը 5—6 մ երկարություն ուներ, 3,5—4 մ լայնություն, երկու ծայրերը ծոպավոր էին։

Բրդյա գործված գոգնոցի կենտրոնական մա-

սը կերպարի նման հարթ և ողորկ էր, միայն եզերքները նախշված, միագույն, լավ լմված միակտոր կերպաս էր։ Նույն ձևով և համապատասխան պայմաններով պատրաստում էին կրծկալը։

Գոտնոցի և կրծկալի գործածությունը ընդհանրացած էր։ Երիտասարդների և տարեցների գոտնոցն ու կրծկալը տարբերվում էին միմյանցից գույներով և եզերքների նախշերով։

Գորգերի, ձեձիմների, կապերտների և ծաղկուն բարձերի հենքը տրվում էր ուղղակի դազգահների վրա, որոնց լայնությունը 0,50 մետրից մինչև 3,60 մետրի էր հասնում։ Մեծ դազգահները անշարժ էին, կաղնի փայտից պատրաստված հաստ ցցերը խորն ամրացված հողի մեջ, հողից դուրս մնացած 0,50-ից մինչև մեկ մետր բարձրություն ունեցող ցցամասում փորվածքներ կային, ուր դնում էին հենքի ձողը, որ չսահեր, իսկ ետևի մասի ձողերն ավելի ցածր էին՝ 0,30—0,5 մ։

Մեծ գորգերի կամ կապերտների հենքի վրա միաժամանակ աշխատում էին չորսից-հինգ գործող, առանց մեկը մյուսին խանգարելու։ Ամեն մեկն իրեն բաժին ընկած միալար քառակուսինները լցնելուց հետո ատամնավոր բկլրիթով հարվածում, նստեցնում և խտացնում էր գործվածքը և խուզում։ Թելերը քառակուսիների մեջ էին անցկացնում կեռով։ Դա երկաթե փոքր գործիք էր՝ ծայրը կոր և բութ, իսկ թելը կարում էին կռիկով՝ կոր և սուր դանակ։

Գորգ, կապերտ, ձեձիմ, նախշուն բարձեր, գոտնոց, կրծկալ և գոտնոցակապ գործողները, բացառապես կանայք էին։ Հումքի պատրաստումից մինչև գործվածքի ավարտումը բոլոր աշխատանքները կատարվում էին նրանց կողմից։

Տղամարդոց արտահագուստի բրդե գործվածքների լրումը (ծեծել-խտացնել, հաստացնել) կատարվում էր տղամարդկանց կողմից։ Գործվածքը գոլ ջրով թրջում, կավով (գլուխ լվանալու հատուկ կավ, որն օճառի դեր էր կատարում) մի լավ մորձում, ապա սալ քարի վրա թակում էին։ Կտորը թակելու ժամանակ մերթ ընդ մերթ կավ էին ավելացնում, ապա եռացրած ջուր թափում և կրկին թակում, մինչև գործվածքը խտանում և հաստանում էր, ապա գոլ ջրով լվանալուց և կավի մնացորդից մաքրելուց հետո, չորացնում և ձևում էին։

Կարված հագուստի ձևը միևնույնն էր, ինչ որ դերձակների կարած չուխա-շալվարինը, միայն առանց սրմաների և ծաղկազարդումի։ Ամեն մի տնտեսություն ինքն էր իր հումքը մշակում, մանում, գործում, ներկում, ձևում և կարում։

**Զինագործություն:** Այս արհեստի մասնագետները բացառապես հայերն էին։

Դերսիմում ժողովրդի կարիքները բավարարելու չափ տնայնագործ զինագործներ կային, որոնք ավելի շատ զենք նորոգողներ էին, քան նորը պատրաստողներ։ Երկսայրի դանակներ (գամե), կեռ թրեր, հաստ սրեր, ամեն տեսակ դանակներ պատրաստվում էին ձեռագործ աշխատանքով և շատ քիչ գործիքների օգնությամբ։

Սրերի և դանակների վրա ծաղկաքանդակներ դրոշմելու, զենքերի փայտե մասերը սադաֆով, արծաթով և մշակված ոսկորներով գեղազարդելու գործում մասնագետ զինագործներ շատ կային, բայց ամենաուշագրավը մեկ հարվածով մեխը կտրող սրերի և դանակների պատրաստությունն էր։ Պողպատին ջուր առնելու և ջուր տալու ժամանակի բնորոշումը մասնագիտություն էր. շիկացած շեղբը կրակից հանելուց հետո վրան ցանում էին բոված և աղացված կաղնու փոշի, ապա՝ ջրում։

Դանակների և սրերի կոթերը շինում էին հրդկված ոսկրից կամ վայրի խնձորի մշակված փայտից։

**Կոշկակարություն:** Լեռնաշխարհի բնակչության շուրջ իննսուն տոկոսը կոշիկ չէր հագնում, այլ օգտագործում էր տրեխ։ Ամեն տնտեսություն ինքն էր մշակում իր օգտագործելիք տրեխի կաշին՝ ձողատում, ձևում, կարում կամ սրմում։ Կոշիկ (ղոնդուրա՝ եմենի կամ մես) հագնում էին տոնական օրերին, այն էլ տարեցները միայն։

Ղոնդուրան կիսակոշիկ էր, առանց ծակերի կամ կապի, երեսը այծի կամ հորթի մշակված կաշուց, աստառը՝ սեկից, կրունկի ետևը՝ կարծր կաշուց, ներբանը՝ հաստ կաշուց, որի վրա խփում էին 50-ից ավելի փոքր բևեռագամ։ Ռեսները, ագաները, համփաները և մեծ տանտերերը ղոնդուրա էին հագնում ընդունելության օրերին, հարսանիքների և ուխտագնացության ժամանակ։ Ղոնդուրան պաշտոնական կոշիկ էր։

Շրջկենտրոններում աշխատող կոշկակարների թիվը, համեմատած բնակչության թվին, սահմանափակ էր։

**Թաղիքագործություն:** Սա դուրս էր եկել տնայնագործության սահմաններից և անցել արհեստների կարգը։ Շրջկենտրոններում կային թաղիքագործների աշխատանոցներ, ուր աշխատում էին վարպետը, օգնականը և աշկերտները։

Թաղիքի հումքը տեղական էր։ Բրդի տեսակավորման ժամանակ ամեն տնտեսություն իր տան

պահանջների համաձայն կատարում էր որդի բաժանք, ընտրելով նաև թաղիքացու։

Թաղիքագործը հումքը ստանում էր փոխանակության կարգով, այստեղ էլ՝ ամեն ինչի, մեկ ընդի՝, այսինքն՝ ստանում էր երկու հոխա բուրդ և տալիս մի հոխա պատրաստի թաղիք։ Անկախ թաղիքի փոխանակության այս ձևից, թաղիքագործն իր միջոցներով և իր հաշվին պատրաստում էր յափնջի, այծենակաշ (հովվական անթև վերարկու), բուրդ, թամբի, համետի և փայտի համար անհրաժեշտ թաղիք, որոնք փոխանակում էին գյուղական սննդամթերքների հետ։ Յափնջու պատրաստությունն ավելի մեծ հմտություն և աշխատանք էր պահանջում, դրա բուրդը ավելի լավ տեսակից էր լինում։ Յափնջու գործվածքը լայնու և անձրևից անթափանց դարձնելու, մանավանդ արտաքին երեսը մազակալելու համար ավելի աշխատանք էր թափվում, հետևաբար ավելի սուղ էր արժենում, համեմատած հովվի այծենակաշի հետ։ Մի հոխայի գինը փոխանակ երկու հոխայի, տալիս էին երեք հոխա բուրդ, իսկ ապրանքը սննդամթերքների հետ փոխանակության ժամանակ մի յափնջու գինը երկու այծենակաշի արժեք էին վերցնում։

Թեև **մազմանությունը և պարանագործությունը** տնայնագործության մաս էր կազմում և ամեն մի տնտեսություն ինքն էր մանում, սրբում այծի մազը և հյուսում իր տնտեսության մեջ օգտագործվելիք պարանը, սամեկապը, յարանը, խուրջինը և խարարը, բայց և այնպես անդ-անդ թաղիքագործությանը միացած էր մազմանությունը և պարանագործությունը, կազմելով ընդհանուր մի զբաղմունք։

**Համետագործություն-թամբագործություն**: Համետագործությունը թեև առանձին արհեստ էր, սակայն սերտորեն կապված էր թաղիքագործության հետ։ Կային համետագործ-թաղիքագործներ։

Համետագործը թամբ, համետ (սեմեր), փայտ պատրաստողն էր։ Համետի, թամբի կամ փայտի կենդանու մարմնին դիպչելիք մասը թաղիքապատված էր լինում, թամբի նստատեղը յափնջու կտորով ծածկում էին, իսկ համետի և փայտի արտաքին մասերը կաշեպատում էին։

Թամբագործությունը մասնագիտական արհեստ էր. թամբագործը թամբը կարելու ժամանակ ուշադրությամբ նկատի էր առնում ձիու կամ ջորու մեջքի կազմության ձևը, ողնաշարի, առջևի երկու սարերի վերի մասի ոսկորների միացման տեղերի համաչափությունը, որպեսզի թամբը ձիու մեջքին լավ տեղավորվեր և ընծվածքներ կամ վերքեր չառաջացներ («թամբախոր», «թամբ—կեր» չաներ)։

Նույն հմտություններ պահանջում էր նաև համետը (սեմեր), որի փայտե մասերի ներդաշնակությունը ընդհանուր կազմվածքի հետ մեծ նշանակություն ուներ, մանավանդ առջևի մասի կառույցը համապատասխանելու էր բեռնատար կենդանու կրելիք բեռի ճնշման ազդեցությանը։

Թամբագործը պատրաստում էր սանձեր, որոնք ծաղկազարդում էր զանազան ձեռագործներով, ուլունքներով, արծաթե նշանակներով, մանավանդ ձիու ճակատի մասում անցկացված կաշվե շերտի կենտրոնում դետեղվում էր եռանկյունաձև կամ սրտաձև արծաթե նշանակ, նույնը և կրծքի կենտրոնից անցնող փոկի վրա։

Իսկ եգան և իշու չուլերը տնայնագործության մաս էին կազմում և ամեն մի տնտեսություն ինքն էր կարում և դասավորում աշխատանքը։

**Փայտամշակություն և ատաղձագործություն**

Այս երկու արհեստը սերտորեն կապված էին իրար հետ։ Տնայնագործ փայտամշակների և հյուսն-ատաղձագործների թիվը գյուղերում ավելի մեծ էր, քան շրջկենտրոններում նույն աշխատանքով զբաղվող արհեստավորներինը։

Անտառախիտ շրջանների բնակչության որոշ մասը զբաղվում էր տաշտ, տաշտակ, թիակ, երկմանի, օխլավու, գնալա, խառնիչ, ծխելու չիբուխ, գուգուկ (գավաթ), սրինգ, գութան, երեքմանի, սոսկի, բահի, փետատի, կացնի կոթեր, իլիկ, բարման, չերեխ, սամի, գդալ, դույլ, տափոր, սխտորդուչ, կոլոակ և այլն շինելու գործով։

Իսկ հյուսն-ատաղձագործները պատրաստում էին դուռ, լուծ, դուռ, պատուհան, սյուն, խոյակ, արմտիքի ամբար, գլխոց, խոնչա (կլոր սեղան՝ մեջտեղը փոս), խուրր, տաչեր և եռեն ավելի բարձր փորը աթոռակներ, ծրագկալ, զանազան ձևի և մեծության սնդուկներ, տափան և մի շարք այլ տնային կամ երկրագործական գործիքներ։

Այս բոլոր աշխատանքները արվում էին ձեռքի ուժով և չարխի, սղոցի, դուրի, կացնի, ուրագի, ռանդուրագի, բուրղուի, ռանդայի, բյուռաբրայի, փորիչի, կարոցի, հարթիչի, ծակիչի և խարտոցի օժանդակությամբ։

**Չարխը**: Ներկայումս փողոցներում դանակ և մկրատ սրելու չարխի ձևով էր, բայց փոխանակ սրող քարերի, լծակի երկու կողմերը հարմարեցված էին զանազան ձևի գործիքներ ամրացնելու։ Աշկերտը ոտքի շարժումով պտտեցնում էր չարխի երկու սարերի վերևում ամրացված լծակը, որի

ծայրին անցրված փորիչ կամ հղկիչ դանակով վարպետն իր ձեռքում բռնած փայտի միջուկը փորում և հղկում էր։ Այսպես վարպետն աշխատում էր դուշ, տաշտ կամ տեփուր պատրաստելիս։ Մշակվելիք փայտի կտորը, որ ամրացված էր սեղմիչ մամուլի մեջ և ուներ չարխի բարձրությունը, վարպետը պտուտակավոր դարձիչի միջոցով ետ ու առաջ էր շարժում, վեր ու վար մղում մամլիչի ատամներում սեղմված փայտը և դեմ տալիս չարխի լծակին ամրացած կտրիչին, փորիչին կամ հղկիչին։ Օգնականի կամ աշկերտի ոտքի արագ շարժումներից պտույտ էր գալիս լծակը և իր ծայրին ամրացված համապատասխան գործիքով ձև տալիս պատրաստվելիք դուշին, որը եթե տաշտ էր, նախապես փորված էր ոտնուրագով, կմախրի ձև ու մարմին տրված ուրագով, իսկ չարխի գործիքը փորում, խորացնում կամ հղկում էր կիսապատրաստ գնտլան, խատվիչը կամ տեփուրը։

գործում էին հաստոցի մանրանկարը ներկայացնող և փայտից պատրաստված մի գործիք. որը չարխի կառույցն ուներ և կոչվում էր չարխիկ. առանց ոտքի շարժիչի. երկաթե լծակի կենտրոնում ամրացված ձախարակի ձևով և նույն հաստությամբ երկաթե ձախարակ. որի շարժիչը կաշվե փոկով աղեղնաձև մի փայտ էր։ Ամեն անգամ, որ աղեղը ետ ու առաջ էր տարվում, ձախարակը ետ



Նկ. 13. Գեղջկական պիտույքներ։ 1. բահ, 2. կացին. 3—4. փետատներ. 5. հրագկալ. 6. ոտնաբաղ, 7. գզլոց. 8. բրիչ (բաղանք), 9. մանգաղ. 10. կեռիկ. 11. պիրի կոիկ. 12. հոտող, 13. կոիկ։

ու առաջ պտույտ էր գործում, իր հետ դարձնելով լծակը, որի ձախ կողմը ամրացված էր ծակիչ կամ բերիչ գործիքը։ Եթե ծակվելիք առարկան շիբուխ էր, նրա մի ծայրը ամրացված էր նույն բարձրությունն ունեցող սեղմիչի մեջ, իսկ մյուս ծայրը միացված ծակիչին։ Ամեն անգամ, որ աղեղալարը ետ ու առաջ էր պտտվում և խորանում փայտի սիրտը, վարպետն աջ ձեռքով աղեղալարը ետ ու առաջ էր մղում, իսկ ձախով ուղղություն տալիս և առաջ բաշում ծակվող փայտը, որի մյուս ծայրը ուղիղ գծով ամրացված էր սեղմիչին։ Լծակի ձախ կողմում ամրացված հարմարանքի շնորհիվ լծակի

Ջարխը օգտագործում էին մեծ ամաններ պատրաստելիս, իսկ փոքրերը պատրաստելիս օգտա-

ծայրին անցկացվելիք գործիքները փոխվում էին։ Ըստ որում ծակի ծայրին ամրացվում էր փոքրիկ կամ կարիճ և փոխադարձաբար հորթիկը կամարաձև կոր կարող էր, որի երկու ծայրերին փայտե բռնակներ կային, այդ սուր գործիքով ձև էին տալիս ստնուրագի և ուրագի բաց գցած անհարթություններին։



Նկ. 14. 1. Ջրհոր, 2.

Ատաղձագործության համար ամենակարևորը հումքն էր։ Գերանդում անտառներ շատ կային։ Վայրի բարդին, սոճին, եղևնին, ընկուզենին, կաղնին, զանգին և ուրիշ այլ ծառեր օգտագործվում էին գերանների (կաղնի), խոյակների (զանգի), սյուների (կաղնի) և տախտակաձևման (բարդի, սոճի, եղևնի, ընկուզենի) ու այլ կարիքների համար։ Եղևնին (մարխ) մեծաքանակ խեժ պարունակելու տեսակետից ամենահարմար ծառն էր, որի տախտակները դիմացկուն, աշխատանքը հեշտ էր լինում։ Վերը նշված ծառերը կտրելուց և ճյուղերից մաքրելուց հետո, 3, 4, 5 և 6 մետր երկարությամբ մասերի բաժանելով, ուղիղ հարթավայրում իրար վրա դարսում և չորացնում էին։ Կային շրջիկ սղոցողներ (խզարճիներ), որոնք իրենց խզարներով շրջում էին գյուղից-գյուղ և բավարարում շինարարների պահանջները։

Խզարճությունը ատաղձագործության հետ առնչություն չուներ, որովհետև առանձին գյուղերից մեկում հազիվ թե գտնվեին մասնագիտական խզարճիներ, որոնց ապրուստի եկամուտը խզարն էր։ Խզարը մեծ ատամներով, մեկից-մեկուկես մետր երկարությամբ, տասից-քսան սմ լայնությամբ սղոց էր։ Խզարճիի գործիքները սահմանափակ էին՝ սղոց, ուրագ, ստնուրագ, գերանը սրիփային կապելու երկաթյա մեխեր (որոնց ծայրերը ծռված էին հորիզոնական ձևով), սուրս և լար։ Սղոցողները աշխատում էին երկու հոգով, մեկը բարձրանում էր մեկուկեսից-երկու մետր բարձրությամբ սրիփային ամրացված գերանին, մյուսը մնում տակը։ Սուրը զոց կմինդրագույն ներկ էր, որի մեջ թաթախված լարանով ուղղահայաց գծեր էին գծագրում գերանի հակառակ, վերի և վարի ողորկված մասերում, ուղղակի ձևվելիք տախտակի հաստությունը և սղոցների հեռավորությունը։ Չևվելիք տախտակի քաշունությունը պահելու և սղոցը ազատ աշխատեցնելու համար բացվածքում փայտե սեպեր էին խրում։ Այսպես, մեկ վեր, մեկ վար էլնելով սղոցի ատամները համաչափ էին բացում գերանը մի ծայրից մյուսը։ Նայած գերանի հաստությանն ու տրամագծին, քսանից մինչև վաթսուն սմ լայնքով տախտակներ էին ձևում, որոնց հաստությունը, ըստ պահանջի, երկուսից մինչև 5, 10, 12 և 15 սմ էր լինում։ Նույն ձևով ստացվում էին նաև բարակուռները կամ դռան գոտիների, շեմքի սեմերի համապատասխան հաստ ու լայն տախտակները։

Թիթեղագործություն: Տեղական թիթեղագործներ չկային, իսկ շրջկենտրոններում որպես արհեստավոր կրպակներում աշխատող թիթեղագործների դրամները շատ սահմանափակ էր։ Թիթեղագործները իրենց արտադրության հումքը ստանում էին կենտրոնական քաղաքներից՝ սպիտակ և սև թիթեղի գլանվածքներ, նիշատրը, լոհիմ, ագաթթու և այլն։ Արտադրում էին վառարան, խողովակ, հացի սաճ, դույլ, ճրագ և զանազան այլ առարկաներ։

Կաշեգործություն: Կաշվի մշակությունը մնում էր տնայնագործության սահմաններում, քանի լայն առումով կաշվեմշակներ չկային։ Շրջկենտրոնում աշխատող կաշեգործները կոշկարներ և թամբիներ էին։ Կոշկարները վաճառում էին մշակված կաշի տրեխի և հալի համար, իսկ թամբիները պատրաստում էին սև, մեշին, այծի և հորթի մորթիներից տկեր, կոշիկի երեսացու և արտահագուստի համար ոչխարի կաշուց պատրաստված կտորներ։

Լեռնաշխարհի բնակչությունը ինքը մշակում էր կաշին և պատրաստում տրեխն ու հալը։ Հալը տրեխի ձևն ու կազմությունն ուներ, միայն թե առանց մազի, սպիտակ և ավելի փափուկ էր։ Հալի կաշին տրեխի համար մշակվածն էր, որի մազը հանելու համար թրջում, ապա դնում էին կավի և կաղնի փայտի մոխրի լուծույթի մեջ ու լավ ճմլում։ Կաշին լուծույթի մեջ պահում էին մինչև երեք օր, որից հետո մազերը առաջին թեթև քերծումից պոկվում էին։ Մազը մաքրելուց հետո սպիտակած կաշին օծում էին ձեթով և լավ տրորում, մինչև որ կաշին կակղանար։ Այս գործողությանը հալել էին ասում, ուստի տրեխը հալից էր կոչվում։ Հալերը հագնում էին ամռան տաքերին, քաղի և կալի ժամանակ և կամ պաշտոնա-

կան այցելությունների օրերին։ Անձրևոտ օրերին և ձմռանը համիլ չէին հագնում։

Կավագործություն–բրուտություն: Տնայնագործության սահմաններում արված աշխատանքը կավագործությունն էր, իսկ դանգվածային արտադրանքը՝ բրուտությունը։

Բրուտությունը կապված չէր շրջկենտրոնների հետ, այնտեղ, ուր ընտիր կավահանքեր կային, կային նաև բրուտներ։

Տնայնագործ կավագործներն առհասարակ կանայք էին, այդ ասպարեզում տղամարդու մասնակցությունը սրանում էր, որ փորում էր կավը, իսկ կինը մաղում էր այն քարմաղով, տղամարդը կավը էշերով կրում էր տուն և մասնակցում կավը հասելու աշխատանքին, մնացյալ բոլոր աշխատանքներին մղում տվողը և ստեղծագործողը կինն էր։

Լեռնաշխարհի շատ գյուղերում թեև կավահող կար, բայց այդ բոլորի մեջ առանձնահատուկ տեղ էին գրավում Ղըզըլքիլիսեի շրջանում, Փախից քիչ վար արտահանված գոց կղիմնդրագույն կավը, Քղիի շրջակայքի Դարման գյուղի, Ասաղարերդի և Օրոփի շրջակայքում արտահանված արծաթագույն կավը, Բոլումորիի կարմիր և Բալուի լեռնային շրջանի Ատեների քրդարնակ գյուղի կարմրավուն կավերը։

Ատերցիների գլխավոր զբաղմունքը բրուտությունն էր։ Ինչպես Զարսանջակի, նույնպես և մյուս շրջանների կավե ամանեղենն իր նրբությամբ, տոկունությամբ, որակով և ձևերի վայելչությամբ միմյանց հետ մրցում էր։

Լեռնաշխարհում խաղողի չգոյության պատճառով գինու կարասներ չէին պատրաստում, իսկ ճանապարհների չգոյության և փոխադրական դժվարությունների հետևանքով արտածման մասին




Նկ. 15. 1. Հարթիչ (կոր դանակ՝ հյուսնի), 2. փորիչ (ատաղձագործի), 3. դգալ-փորիչ, 4. բերոց (կավագործի գործիք), 5. կարժփետ, 6. թեռկալ, 7. ակիչ, 8. թաթակիչ։

մտածելն անգամ ավելորդ էր։ Եփրատի և Արածանիի գետափնյա այն շրջաններում, ուր խաղողը առատ էր և գինեգործությունը զարգացած, կարասներ շինվում էին։

Դերսիմի լեռնային շրջանների բնակչությունը առավելապես օգտվում էր կավամաններից, որոնց գործածությունը հասարակական լայն խավերի կողմից ընդհանուր բնույթ էր կրում։

Ասվեց, որ կավը կավահանքում քարմաղով մաղում և իշաբեռներով փոխադրում էին տուն ու դարսում տան այն մասում, որը հատկացված էր համապատասխան արտադրանքի։

Կավը հասելու (ոտքով թրել, թիակներով վրա տալ և խառնել) աշխատանքը կատարվում էր տղամարդկանց կողմից, հարկադրական պարագաներում միայն՝ կանանց կողմից։ Կավահողը թրջելուց և ցեխը պատրաստելուց հետո փոքր քանակով մրեղ (ամենամանր հարդ) էին ածում և հասում։ Այս գործողությունը տևում էր 4—6 ժամ, նայած հասվելիք կալի քանակին, մինչև որ կավը դառնում էր կպչուն մի զանգված, ապա ձգում էին, որ հանգչի մեկ օր և հունի գա՝ նպատակին ծառայելու համար։

Հաջորդ օրը բրուտ կինը (կամ մի քանիսը միասին) ձեռնարկում էին գործի։

Խնոցի: Կավե խնոցիով հարված թանը ավելի համեղ էր, քան փայտե խնոցիինը։ Կավե խնոցին ավելի շուտ էր մաքրվում, որևէ հոտ չէր տալիս, ջերմությունը ներս չթափանցելու հատկության շնորհիվ կարագն ավելի սրսուռ էր լինում, այդ էր պատճառը, որ մեծամասնությունը նախապատվություն էր տալիս կավե խնոցուն։

Քյուփ: Կարասից ավելի փոքր էր, շինվում էր մինչև մի մետր բարձրությամբ, տակի և բերանի տրամագիծը համաչափ, 0,25 մ աստիճանական բարձրացումով և լայնքի ընդլայնումով, տակի մասից մինչև 0,50 մ բարձրանալը տրամագիծը հասնում էր 0,50 մ-ի, ապա կրկին նեղացվում և բերանից 0,10 մ վար հասնում էր 0,20-ի, իսկ բերանը՝ 0,25-ի։ Քյուփը վերի մասում, բերանի շրթներից դեպի վար ուներ երկու բռնակ՝ անկյունաձև։ Լեցուն վիճակում քյուփը տեղից-տեղ փոխադրելը դժվար էր։ Քյուփի ներսի մասը օծում էին կեչու կեղևից պատրաստված թեև սև, բայց անուշահոտ ձյութով, որը գա պահպանում էր տղրի բայքայիչ ներգործությունից և թույլ չէր տալիս, որ աղջուրը դուրս ծորի։ Քյուփերն առհասարակ օգտագործվում էին թթու բռնելու, մասամբ լուրխա (լոլվագ), մեռճիմեկ (ոսպ), տղացված պուլգուր, կորկոտ և ամրաիկ լցնելու համար։ Միջին հաշվով

0,40—0,60 մ բարձրության և առանց անկի բյու-փերը օգտագործվում էին պանիր հարելու (բերա-նը լաթով կապելուց հետո մախերի վրա դարսելու) համար. Մեծ թե փոքր բյուփերը ինչպես որ ներսի կողմից ձյութով օծում էին, այնպես էլ դրսից ծաղկազարդում էին բուսական և կենդանական զանազան նկարներով՝ մի անգ վայրի շուշան, կա-կաչ (չիլ), ձնծաղիկ, մանիշակ. մի ուրիշ անգ՝ արև, լուսին, աստղեր, աղավնի, սիրամարգ, եղ-նիկ, փասյան և այլն.

Պուտուկ և խուփ։ Նշված ամանեղենության ան-դամների թվին, պուտուկներն [illegible] մեծ, մի-ջակ կամ փոքր էին լինում. Գյուղական շրջաննե-րում ամենատարածված և ամենագործածական կավամանը պուտուկն էր. Պուտուկների կազմու-թյան ձևը տարբերվում էր բյուփի կաղապարից. պուտուկի տակի մասի տրամագիծը եթե 0,15 մ էր, բերանը 0,20 էր, տակից դեպի վեր քիչ-քիչ լայնանում և կեսին հասնում էր 0,30 մ-ի, ապա դարձյալ նվազում և պռունկներից վար հասնում էր 0,18-ի, ուր դեմ-դիմաց զետեղված էին երկու բռնակ (անկ, անգ)՝ պռունկներից մինչև նեղաց-ված մասը. Պուտուկների բարձրությունը տար-բերվում էր 0,10—0,60 մ-ի միջև, ըստ չափի փոխ-վում էին տակի, մեջտեղի և բերանի տրամագծերի չափերը.

Խուփը պուտուկի կափարիչն էր. Պուտուկի բե-րանի տրամագծին համապատասխան պատրաս-տում էին խուփերը, որոնց վրա դնում էին համա-պատասխան անկ. Պուտուկները և խուփերը ձյու-թով չէին օծում. Բոլոր կերակուրները, մանավանդ խաշն ու հարիսան, թանապուրն ու բեշկը եփում էին պուտուկներով.

Բղող, բղիկ, բղուկ, բղկիկ: Չորս անվան նշա-նակությունը միևնույնն է, բղողը ավելի մեծ, բղիկը ավելի փոքրն էր, երկուսն էլ օգտագործվում էին միևնույն նպատակի համար. Քամված մածու-նը, բազկրթանը, մեղրը, մանանան, փոքր գնդիկ-ներով մեղրի մեջ դրված կարագը, չորթանը պա-հում էին բղողի կամ բղիկի մեջ. Բղողի և բղիկի կառույցները համաձև էին, բարձրությունը տար-բերվում էր 0,10—0,80 մ-ի միջև, տակի մասն ու բերանը համաչափ էին՝ 0,10—0,15 մ, նայած մեծությանը, իսկ փորի տրամագիծը 0,25—0,50 մետր էր լինում. Բղողը և բղիկը դրսից սև ձյու-թով գեղազարդում էին, երկուսն էլ զույգ անկեր ունեին և համապատասխան կափարիչ (խուփ).

Տաշտ-տաշտակ: Կավից պատրաստված տաշ-տը օգտագործվում էին խմոր թրելու, լվացքի, երե-խաներին լողացնելու և տնային այլ աշխատանք-ների համար. Տաշտի երկարությունը 0,90, վերին կողմի լայնքը՝ 0,45, միջին կողմից տակի լայնքը՝ 0,25, իսկ խորությունը՝ 0,20—0,25 մետր էր լի-նում. Միջին կողմը ուղիղ անկյուններ չուներ, վե-րին մասից քիչ դեպի վար նեղանում էր և փոքր կորություն ստանում միջին կողմի հատակին, իսկ արտաքին հատակը հարթ և ուղիղ էր. Տաշտակը մեծ տաշտի փոքր ձևն էր, որն օգտագործվում էին զաթայի խմորը թրելու (շաղել, շաղվել), երեխա լողացնելու և տնային այլ աշխատանքների հա-մար. Կային և անշարժ, տեղվույն վրա շինված, բայց անթուրծ մեծ տաշտեր, որոնք օգտագործվում էին միմիայն լավաշ հաց թխելու համար, քանի որ հացը թարմ և կակուղ էր պահում. Ծածկում էին լավաշով. Այս ձևի տաշտերը դրվում էին [illegible]-րում.

Քարղան: Զանազան չափի և մեծության քար-ղանների ձևը տարբերվում էր մյուս կավամաննե-րի կառույցից. Քարղանը ճաշ լցնելու պնակն էր, որը, համեմատած ճաշողների թվին, մեծ կամ փոքր էր լինում. Քարղանը օգտագործվում էին տաք թե պաղ կերակուրներ և կաթնամթերքներ (թան, մածուն, կաթ) լցնելու համար. Քարղաննե-րի հինգ չափսեր կային՝ 0,10 մ տրամագծից սկսած մինչև 0,50 մ (10, 20, 30, 40 և 50 սմ տրամագծով լայներեսան ամաններ).

Արտաքին տրամագծի տակի մասի միջին կող-մը վրայի տրամագծի կեսն էր՝ 0,5, 0,10, 0,15, 0,20 և 0,25 մետր. Նույն համեմատությունը պահ-վում էր նաև խորության մեջ, բացի 0,10-ից և 0,15-ից, որոնց խորությունը փոքր-ինչ պակաս էր լինում բերանի տրամագծից.

Նկատի ունենալով լեռնաշխարհի բնակչության հավաքաբար մի պնակից ուտելու սովորությունը, վերը նշված չափսերի ամանները օգտագործում էին միաժամանակ նույն պնակից ճաշողների թվաքա-նակի համեմատ.

Խորովածի, փլավի, տապակոցների և նման առանց ջրի կերակուրների համար օգտագործված քարղանների խորությունը և տակի տրամագծի համեմատական չափերը փոխվում էին. Օրինակ՝ 0,10 մետրանոց քարղանի բերանի տրամագիծը հավասար էր տակի տրամագծին, խորությունը՝ հազիվ 0,4 մ-ի, 0,20-ի տակի տրամագիծը հավա-սարվում էր 0,15-ի, իսկ խորությունը՝ 0,6 մ-ի, 0,30-ի տակի տրամագիծը լինում էր 0,22 մ, իսկ խորությունը՝ 0,8 մ, 0,50-ի տակի տրամագիծը հավասար էր 0,40-ի, իսկ խորությունը՝ 0,10-ի, փոխանակ 0,25 մետրի.

Ձվածեղի համար օգտագործվող ամանների




Նկ. 16. Տնային կարասիներ։ 1. Թոնիր—ա. ծործ, 2. կոնք, 3. բարդան, 4. տաշտակ, 5. ջրածիկ, 6. մակրթնոց, 7. ջոր սերի բդող (կճուճ), 8. մածնաբյուր, 9. բյուր, 10—11. թասեր, 12. կարաս, 13. կուժ (փարչ), 14. ծափ, 15. պուտուկ, 16. տեփուր, 17—18. կուռիկներ, 19. կճիկ, 20. աղաման, 21. խնկաման, 22. լուլիկ, 23. գավաթ, 24. կանթեղ, 25. ճրագ, 26. բադիկ-ճրագ, 27. աղաման։

տակի և վրայի չափսերը միևնույնն էին. Միայն խորությունը իջեցված էր 0.2 մետրից մինչև 0.5 մետրի։

Սնոթներ. Տակի տրամագիծը 0.25 մ. փորը ընդլայնումով վեր բարձրանալով հասնում էր 0.30 մ լայնության տրամագծի. ապա դեպի բերանը աստիճանական նվազումով հասնում էր 0.15 մ-ի, իսկ դեպի պսակը ավելի լայնանալով, հավասարվում էր 0.20 մ-ի։ Սնոթի բարձրությունը հավասար էր 0.35 մ-ի. բերանի երկու կողմերում փոքր ունկեր էին արված, մի ունկից մյուսը կամրջաձև անցկացնում էին հաստահյուս յարան, սնոթը այստեղ կամ այնտեղ տանելու կամ կենից կախելու համար։ Դաշտային աշխատանքների ժամանակ սնոթներով ջուր էին փոխադրում բանվորներին, իսկ սնային գործածության ժամանակ ման, սեր, պանիր կամ թարմ կարագ լցնում և հով տեղերում կախում։

Սափ. Զմռսած արդար յուղը (հալած կարագ), դավուրման լցնում էին ծափերի մեջ և շարում տակառդնոցի սեթերում։ Սափը լայն բերանով, ուռած փորով, պուտուկից ավելի լայն և գրեթե

րի հաստությունը՝ 0.12 մետրից ոչ պակաս. մինչև 0.3 մ բերանի եզրերից դուրս եկած հաստ շրթներով։ Թոնրի տակի մասի եզրերից դեպի վեր բացված օդանցքի բարձրությունը 0.20 մ. լայնքը՝ 0.15 մ էր։ Օդանցքի համեմատությամբ և նույն չափով էր փողրանքի վերին մասի տրամագիծը. հավասար 0.15 ս-ի. որի շարունակությունը նույն չափսի կլոր փողրանքներով կիսահորիզոնական ձևով բարձրանում էր վերև. մինչև վերին շրթի հավասարությունը, որ և կոչվում էր ծործ կամ սնտու։

Հողի մեջ լրիվ թաղված թոնրի շրթունքից մինչև ծործի բերանն ընկնող հեռավորությունը. այսինքն՝ ծործի վերին ծակից մինչև թոնրի շրթունքի միջացը 0,80 մետր էր։

Փոքր թոնրի կառույցը նույն ձևի էր, ավելի փոքր չափսերով։ Թոնրի վերին շրթներում խաչերկաթի չորս ծայրերը տեղավորելու համար իրար դեմ-դիմաց չորս փոսիկ կար, որոնք ծառայում էին խաչերկաթի թաթերը այս կամ այն կողմ չերթալու։

Մակարդնոց (մակրրթնոց)։ Մակարդնոցը կաթ




Նկ. 17. Թարգանների բերանների տրամագծերը։

նույն բարձրությամբ պահեստաման էր։ Սափի բարձրությունը 0,60 մետր էր, փորի տրամագիծը՝ 0,40 մ, բերանի տրամագիծը՝ 0,30 մ, տակը՝ նույնքան։

Թոնիր (թունդիր)։ Լավաշ հացի որակը մեծ մասամբ կախված էր թոնրի որակից։ Թոնրի կառույցը մեծ հմտություն էր պահանջում, շատ փայտ սպառող և անորակ հաց արտադրող թոնիրը հանում և նորն էին դետեղում։ Մեծ թոնիրներում լավաշ էին եփում, պիրան կախում, ռուձ-ղավուրմայի և այլ կերակուրներ պատրաստում։ Փոքր թոնիրներում ղաթա էին թխում, ջուր եռացնում, կաթ տաքացնում (եթե կաթսան մեծ էր և օջախում չէր տեղավորվում)։ Մեծ թոնրի բարձրությունը 1,30 մետր էր. բերանի ներքին լայնքի տրամագիծը՝ 0,80 մ, հատակը՝ 1 մետր, առանց տակի. կողմե-

մակարդելու (մերել) հատուկ աման էր, որի ամենամեծ չափի տրամագիծը հետևյալներն էին՝ տակի մասը 0,40 մ, խորությունը՝ 0,50 մ, բերանի լայնքը՝ 0,60 մ։ Նայած անասնապահի կաթնատնտեսության ծավալին, չափսերը նվազում էին։

Կուժ, փարչ, սափոր, կուտիկ։ Տարբեր ձևի և չափի այս ամանները ջուր կրելու կամ ջուր խմելու համար էին։ Դրանց կավի հալեցման ժամանակ կավացեխի մեջ դնում էին բիչ քանակությամբ աղ, որը օգնում էր ամռանը ջուրը պաղ պահելուն, բայց ավելի նպատակահարմարը բնականից աղախառն կավի օգտագործումն էր, ինչպես Բոլոմորիի և Զարսանջակի կավերն էին։

Կուժը նուրբ պարանոցով, փոքր բերանով, մի անկանի ջրամանն էր, որի բարձրությունը 0,60 մ, բերանը՝ 0,10 մ, տակը՝ 0,15 մ, միջին հաստու-

թյան տրամագիծը՝ 0,30 մ, վզի հաստության միջին տրամագիծը՝ 0,08 մետր էր։

**Սափորը** կժից քիչ փոքր էր։ **Փարչի** բերանի տրամագիծը 0,10 մ, տակը՝ 0,15 մ, բարձրությունը՝ 0,50 մ, փորի լայնությունը 0,25 մ էր, մի անկանի էր, պարանոցի լայնությունը հավասար էր բերանի լայնքին՝ մինչև 0,05 մ, պռունկից դեպի վար պահում էր համաչափությունը, հետո միայն սկսում աստիճանաբար լայնանալ։

**Կուռիկը** ամենից փոքրն էր։ Բարձրությունը՝ 0,30 մ, տակի տրամագիծը՝ 0,10 մ, փորի հաստությունը՝ 0,15 մ, վզի երկարությունը՝ 0,05 մ, հաստությունը ներքին տրամագծով՝ 0,02 մ, բերանի լայնքը 0,03 մ։ Կուռիկի անկի կենտրոնում մի փոքր ծակ կար, որը անցնում էր անկի միջից և անկի վերջույթում միանում կուռիկի ներքին մասին, ուր ծակն ավելի լայն էր քան անկի վրայի բացվածքը։ Կուռիկը ջուրը սառն էր պահում։ Ջուրը խմում էին անկի ծակից։

**Ջրամիկ:** Աղավնակերպ այս ջրամանի ջուրը հոսում էր կտուցից։ Ջուր լցնում էին պոչի վրա բացված ծակից, վզի հատման տեղից մինչև պոչի սկսման տեղը, մեջքին զետեղված էր բռնակը (անկ)։ Ջրածիկն օգտագործում էին փեսայի հալվը օրհնելուց հետո, փեսայի զգեստավորվելուց առաջ, լվացվելու ժամանակ և կամ կղերական մեծ հյուրերի լվացվելու համար։

**Աղաման:** Աղամանի կառույցը առանց ոտքի և թևերի մարդու կերպար էր, գլուխը՝ ճաճանչավոր արև, վզին՝ մանյակաձև լուսին, կրծքերին՝ աստղեր։ Աղամանի աղը լցնում էին պորտից, կրծքերի տակ բացված կլոր ծակից, որի մեծությունը շերեփի բերանի ծավալն ուներ. մեծ աղամաններում մինչև 50 կգ աղ կարելի էր տեղավորել։ Կային և փոքր աղամաններ՝ առօրյա գործածության համար, որոնք շարժական էին և գտնըվում էին տանտիկնոջ ձեռքի տակ։

**Կճիկ:** Կճիկը փարչի մանրանկարն էր, որն օգտագործում էին ձեռաց սոխրանց դնելու, պիշրի յուղը տապակ լցնելու, հալված մեղրը թոնրի մոտ միշտ ձեռքի տակ ունենալու և նման մանր բաներում։

Կավից պատրաստում էին նաև **ճրագ. գըլնոց. խնկաման. բաղիկ. կանթեղ. յուղիկ. տեփուր.** կաթի կամ գինու **բաժակներ. գավ** (գինի կամ օշարակ լցնելու ծաղկազարդ աման) և այլն։

Տնայնագործ-կավագործները հատուկ գործիքներ չունեին, պատրաստվելիք ամանին ձև տվողը մարդկային ձեռքերը և մատներն էին, համաչափությունը պահում էին լարանի և ցցուն փայտե չափի օգնությամբ. անհարթությունները ուղղում էին քերիչով. կավը թրջում բաղիկով (սրբիչ) և պատրաստ ամանը սավերի մեջ չորանալուց հետո կոկում էին կոկ քարով՝ կոկիչով։

Չորացած և կոկված կավե ամանները թրծում էին բարակ կրակով. ուժեղ և բոց արձարձող կրակը աննպաստ արդյունք էր տալիս։ Այդ էր պատճառը, որ ամանեղենը թրծելու համար որպես վառելիք օգտագործում էին **կչկուռ, աթար** և **լեռմե**՝ խառն փայտի բարակ չյուղերով։

Մանր ամանների թուրծը կատարում էին թոնիրների մեջ, միշտ մեղմ կրակի վրա. աթարի կամ կչկուրի կրակով։ Մեծ ամանների թուրծը կատարում էին հատուկ փորված և փոռի ձև արված թրծարաններում։ Ամանները թրծվելուց և քիչ սառչելուց հետո, ձյութապատում և նախշում էին։

**Ոսկորի և եղջյուրի մշակում:** Տնայնագործության այս ճյուղի արհեստավորները գտնվում էին վարչական կենտրոններում։ Նրանց աշխատանքը սահմանափակված էր մի շարք իրերի և առարկաների պատրաստությամբ։

Ոսկորի հղկումն էլ կատարում էին փայտամշակման չարխի և չարխիկի օգնությամբ։ Ոսկորից պատրաստում էին դանակների, սրերի կոթեր, կանանց մազի հյուսվածքների ծայրի փնջիկների ծամկալներ, հրացանների կոթերը նախշելու զանազան ձևի սալիկներ, կոճակներ, ծխամորճեր, կանանց աչքերին ծիր քսելու փոքրիկ ձողիկներ, ականջի և քթի խզմաններ (կանացի զարդ և այլն)։

Եղջյուրից պատրաստում էին արծաթե բանվածքով եղջերափող. գինու և օշարակի ըմպանակներ, վառոդ գնելու պահեստամաններ և այլն։

Ամեն մի դերսիմցու կաշվե գոտիկից կախ էր ընկած ծաղկազարդված, սեղմ կափարիչով մի եղջյուր, որ ամրացված էր բարակ շղթայով։ Մշտկված և գեղազարդված այդ եղջյուրի մեջ խնամքով պահվում էր շեշխանեի կայծքարի տակ դրվելիք չոր վառոդը, որն այդ ամանում խոնավությունից զերծ էր մնում։

Եղջյուրից պատրաստում էին նաև արյուն առնելու հարմարանք։

**Ոսկերչություն և ժամագործություն:** Լեռնաշխարհում ժամագործներ գրեթե չկային, շրջկենտրոններում աշխատող ոսկերիչները փոքր ի շատե նորոգում էին ժամացույցներ։

Ոսկերչությունը առանձնապես զարգացած չէր։ Ոսկերիչների գլխավոր արտադրանքը սպառվում էր տեղում, աշխատանքի 80 տոկոսի հումքը (ոսկի և արծաթ) տալիս էին պարզատերերը, վաճառքի համար պատրաստված զարդեղենները հազիվ 20

տոկոս էին կազմում։ Նույն ժամանակա արհեստավորներ, որոնք պատրաստում էին գեղարվեստական արժեք ներկայացնող զարդեղեն՝ ոսկե և արծաթե իրեր՝ շղթայաձև կամ հյուսված նուրբ թելերով, ոսկե և արծաթե բեհեզից, որը կրում էին միայն կանայք։ Թեփելիկը նրբաթել հյուսվածք ունեցող միակտուր կլոր սկավառակ էր, հարմարեցված գլխի ձևին, գլխի գալիք մասը ուռուցիկ էր, թե՛ գմբեթաձև, իսկ արտաքին մասի միջին կենտրոնում, 0,3 մ բարձրությամբ և ընկույզի մեծությամբ գեղակերտ թագի մանրանկար էր լինում։ Թեփելիկի եզրերից մինչև ճակատը նուրբ շղթաներով զարդոսկիներ էին կախված։

Թեփելիկը գործածելուց առաջ կարում էին ֆեսի կամ այդ նպատակով հյուսված գունավոր գտակի վրա, որը գլխին էին ամրացնում երկու եզրերից իջնող նրբահյուս գայթանե թելերով, հանգուցած կզակի տակ։ Թեփելիկի վրայից կապում էին մետաքսե փաթի կամ սովորական յազմա, որի երկարությունը ետևի կողմից հասնում էր մինչև գոտկատեղը։ Թեփելիկ կրելու իրավունք ունեին միայն ամուսնացած կանայք։

Ճակատնոց։ Սա ոսկեշար շղթա էր։ Ղարի, մամուռի և քառորդ ոսկե դրամների թուրայի ուղղությամբ, դրամի եզրերին, ամրացնում էին ոսկե փոքրիկ անկ, որը նուրբ շղթայով կապում էին ավելի լայն ոսկե շղթային և կրում ճակատներին։

Մանյակ (կերասնդ)։ Կանանց համար այս վզկապը պատրաստում էին արծաթից կամ ոսկուց, նայած կրողի սոցիալական վիճակին։ Լինում էր ակնակուռ, զարդարված թանկագին քարերով։ Մանյակը կիսալուսնաձև էր, վարի եզրերից ոսկե նուրբ շղթաներով կախում էին անկված ոսկե դրամներ՝ մեկ ոսկինոց, երկուսուկես ոսկինոց, հինգ մեկնոց, ըստ մեծության և չափի։

Ապարանջան։ Պատրաստում էին զանազան ձևի ապարանջաններ՝ ծալովի, օղակավոր, թելահյուս, ոսկե և արծաթե դրամների շարահյուս և այլն։

Ըստ պատվերի կամ վաճառքի համար պատրաստում էին նաև ոսկե և արծաթե գինդեր, մատանիներ, բլթի և ականջի խզմաներ, ժամացույցի շղթաներ, կոճակներ, փորագրված կնիքներ, արծաթապատում չեչխաններ, դանակի և սրի կոթեր, չինում զանազան ձևի զարդեղեններ։ Մեծահարուստների համար պատվերով պատրաստում էին ոսկեջրապատ արծաթյա ափսեներ, սրճեփներ, գավաթներ, գդալներ և այլն։

Սափրիչություն։ Մազ կտրելու կամ երեսն ածելելուց բացի սափրիչն այլանդ ատամնաբույժ բժիշկ էր, հիվանդներ էր դարմանում, կտտոցով արյուն էր առնում, տզրուկ փակցնում և այլն։ Սափրիչը գույնը կտրող էր, քթից հոսող արյունը դադարեցնող և կամ գլխացավի ժամանակ քթի ծակերից արյուն հոսեցնել տվող։ Երբեք սափրելիս տաք ջրով նաև գլուխ էր լվանում։ Բարձր կախված ծորակավոր մի ամանից տաք ջուրը հոսում էր սափրվողի գլխին, ապա ձեռքերով բռնած լականի մեջ վարպետը օճառում էր գլուխը, վիզը և մաքրում դեմքի զանազան մասերը։

Սովորական սափրումը անտեսություն ամեն մի անգամ ինքն էր կատարում, և կամ տան անդամներից մեկը տան մյուս անդամների մազերը կտրում կամ սափրում էր, իսկ հիվանդության դեպքում հրավիրում էին մասնագետ սափրիչի։

Շրջուն արհեստավորներ։ Կլայեկագործները, պայտարները և երփնաճիները շրջուն արհեստավորներ էին։ Ինչպես քաղաքային ունեին իր ծխերը և թաղերի փիրը կամ սեխոր իր թաղոյները, այնպես էլ շրջուն արհեստավորներն ունեին իրենց գյուղերը։

Կլայեկագործը, էշին բեռնած իր փուքսը և կլայեկն ու նիշադիրը, շրջում էր գյուղից-գյուղ և կլայեկում պղնձե ամաններ։ Աման կլայեկել տվողը, բացի վարձը վճարելուց, կերակրում էր նաև երկու կամ երեք հոգուց բաղկացած կլայեկողներին։

Պայտարը իր հետ վերցրած պայտ և մեխ, մի արցան, մի մուրճ և սմբակներ տաշելու մի կտրոց, օգնականի հետ շրջում էր գյուղից-գյուղ՝ ձի, եզ կամ էշ պայտելու։

Երփնաճին, դրպանը դրած իր նշտարակը և մի չիչ չիճանը, շրջում էր գյուղից-գյուղ ծաղիկի դեմ երեխաներին պատվաստելու։

Գյուղացին կերակրում և պատսպարում էր ժամանակավոր հյուրերին, վարձատրում բնամթերքով։ Դրամական վճարումները հազվադեպ էին։ Արհեստավորներն իրենք էին խնդրում կատարված աշխատանքի փոխարժեքը վճարել կարագով, պանրով, մեղրով, մորթով, նույնիսկ ձվով։

Կլայեկագործն ու պայտարը ապրիլից մինչև հոկտեմբեր վաստակում էին այնքան, որ կարող էր բավարարել ընտանիքի անդամների ամբողջ տարվա բոլոր պետքերը։

Շրջուն արհեստավորներից շատերը, բացի իրենց ապրուստը հոգալուց, կարողանում էին արտեր գնել, տներ կառուցել, բայց առանց հրաժարվելու իրենց արհեստից։

Ինչպես մի շարք այլ արհեստներ, կլայեկագործությունը և պայտարությունը ևս ժառանգական էին, հորը հաջորդում էր արդեն մինչ այդ արհեստին և հաճախորդներին ծանոթացած իր որդին կամ եղբորորդին։

Ձուլարան: Խորխոր գյուղի մերձակա քարայրերից մեկում կար օգտագործվող հանք։ Հանածո քարը փոխադրում էին մուտքի դռան մոտի ժայռահարթակը, ուր գտնվում էր գյուղի ձուլարանը։ Ինչպես հանքը, նույնպես և հանածոն ու ձուլարանը համայնական էին, և սակայն առանց սահմանափակումի արտադրում էր ով ինչքան որ պետք ուներ, երբեմն անհատական նախաձեռնությամբ, բայց շատ անգամ համագործակցությամբ՝ Հավաքական աշխատանքով ձեռք բերված արտադրանքը բաժանվում էր համահավասար, աշխատանքի մասնակիցների թվի համեմատությամբ, առանց որևէ նախապատվության։

Նախնական ձուլարանի կառույցը շատ հետաքրքիր էր։ Միակտուր մի ապառաժի մեջ փորված խորը փոսը ծեփված էր մի տեսակ կավով, որն ավելի ամուր և դիմացկուն էր, քան բրուտների գործածած կավը և դիմանում էր ամենաուժեղ ջերմաստիճանին։

Ձուլարանի տակից կավե հաստ խողովակ էր անցնում քարի միջից և դուրս գալիս ձուլարանի դեպի ձորը նայող պատից, ուր սալարկված մի հարթակում, քով-քովի շարված էին կավից պատրաստված, բայց լավ թրծված զանազան ձևի ու մեծության կաղապարներ, դասավորված այնպիսի ձևով, որ միմյանց հետ կապ էին պահում եզերքին բացված փոքր խորության միջոցով։

Ձուլումը կատարում էին սև կաղնու փայտից պատրաստված փայտածուխի միջոցով։ Նախ ածուխով ծածկում էին ձուլարանի հատակը, ապա շարում պատերի եզերքին, հանածոն լցնում ածուխի վրա, ապա զետեղում կավից պատրաստված երկու լայն խողովակներ, որոնք շինված էին այնպիսի ձևով, որ չէին կպչում հատակին, այլ եռոտանու նման ոտանցքներ ունեին ձուլարանի մեջ զետեղված մասում։

Խողովակները զետեղելուց հետո, մի շարք ածուխ, մի շարք հանքաքար շարելով, հասցնում էին մինչև վեր։ Երբ փայտածուխի և հանքաքարի շերտերը հասնում էին մինչև պռունկը (վերին եզերքը), որից դուրս էին բերում որպես օդանցք ծառայող երկու խողովակ, վերջին ածուխի շերտերի վրա զետեղում էին երկու նոր խողովակ, ապա գմբեթաձև ծածկում էին կաղնի փայտից դարձիկներ (ձողեր), որոնք փակում էին մանր ճյուղերով և խոտով, ապա ծեփում կավով այնպես, որ ոչ մի կողմից, բացի ծեփից դուրս մնացած կավե խողովակներից, օդ չթափանցեր։

Ծեփը մնում էր մեկ օր և քարանում, միակտուր մի զանգվածի, ավելի ճիշտ՝ խուփի (կափարիչ) ձև էր առնում, այն ժամանակ վառված մարխերը գցում էին չորս կավե խողովակներից ներս և չորս կողմից կրակն արծարծում ոչ թե փքոցներով, այլ մարխերի օգնությամբ։

Վարի կավե ծորակը թոնրի ծործի նման օդանցքի դեր էր կատարում մինչև այն ատեն, որ ածուխը ամեն կողմից կրակ էր առնում։ Ապա հալված հանքանյութը ծորում էր նույն ծորակից և կաղապարվում կավե կաղապարներում։

Այս հանածոն օգտագործում էին կապարի տեղ, բայց սա կապար չէր, նախ որ շատ փայլուն էր, ավելի կարծր, քան կապարը և մանավանդ հրացանի երախից դուրս գալիս և որևէ կենդանու կամ մարդու դիպչելիս կտորների էր վերածվում, ավելի ճիշտ՝ բզկտում էր։ Նույն գնդակը, եթե նախքան գործածելը հալած ճարպով օծվեր, մասնիկների չէր բաժանվում, բայց մարմնից դուրս գալու ժամանակ ետևի մասը ճեղքվում և կեռանում էր։

Դերսիմում այդ գնդակները գործածում էին թրքական բանակների դեմ կռվելու ժամանակ և կամ վտանգավոր գազանների դեմ կռվի բռնվելիս, իսկ միջաշիրեթական մարտերում չէին օգտագործում, նման արարքը դիտվում էր որպես տմարդություն։ Դրանք չէին օգտագործում նաև որսի թռչունների և մորթին օգտագործվելիք գազանների որսի ժամանակ, որովհետև գնդակը պատռում էր թռչուններին և գազանների մորթին։

Ասվեց, որ հանքը համայնքային սեփականություն էր, բայց ոչ ամբողջ Դերսիմի համար, այլ տվյալ գյուղի բնակչության ու համապատասխան աշիրեթի անդամների համար։

Այդ հանածո-կապարից փոխանակության կարգով օգտվում էին աշիրեթի բոլոր անդամները, իսկ մնացյալներին տրվում էր այն դեպքում, եթե աշիրեթապետից կամ ծերերի ժողովից արտոնված էր և կամ այն աշիրեթի անդամներին, որոնք թուրք պաշտոնական զորքերի դեմ կռվելու էին դուրս գալիս։

Հանքի վայրը և ձուլման պտրապանները խիստ գաղտնի էին պահվում։ Դրա պաշտպանության և հսկողության պարտականությունը ծանրանում էր ոչ միայն համագյուղացիների, այլև համայն աշիրեթի անդամների վրա։

Առանձնահատուկ տեղ էր գրավում ձյութի ստացումը Մալ լեռան շրջանում։ Այս ձյութը օգ-

տագործվում էր որպես ծամոն, ոսկեզանի՝ տեղ-տեղ խառնված ուրիշ բաղադրությունների հետ։ Շատ էր տարում կանկառի մի տեսակը, ծառ-կանկառ անունով, որը համեմատած ուրիշ շրջանների նույն տեսակի հետ, երկու, նույնիսկ երեք անգամ հաստ ու երկար էր, հետևաբար նույն համեմատությամբ էլ շատ կաթ էր պարունակում իր արմատներում և ցողուններում։ Կտրված կանկառի կաթը տեղում հոսեցնում էին արևից ջերմացած սալաքարերի վրա և անցնում հաջորդին և այդպես շարունակաբար մինչև արևմուտ. ապա վերադառնում էին այնտեղ, որտեղից սկսել էին։ Մինչ այդ, կաթն արդեն մակարդված և ձյութ պատրաստ էր լինում։ Հավաքում էին խտացված ձյութը և վերածում գնդիկների, որոնք պահվում էին իրենց օգտագործման համար, իսկ վաճառքի հանվելիքները վերածվում էին բարակ թերթիկների և համապատասխան գործիքով կտրվում միատեսակ կլոր լիթերի՝ ոսկեդրամի չափի։ Այս ձյութի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ չէր չորանում, պահում էր բուսական անուշ կաթնահամը և խիստ առաձգական էր։

## ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Լեռնային Դերսիմը չուներ պետական հաղորդակցության միջոցներ։ Գլխավոր խճուղին, որը Երզնկան կապում էր Կարինին և որն անցնում էր Սանասարի կիրճից, Ճերիճիկի բարձունքից, Դերջանի հովտից և Մամախաթունից, դուրս էր մնում Դերսիմի սահմաններից։ Հաղորդակցության բոլոր ճանապարհները գալիս կանգ էին առնում վարչական փոքր կենտրոնների առջև։ Խարբերդից Խոզաթ, Բերկրի, Բալու, Կարինից Ճապաղջուր, Քղի, Երզնկայից Բոյամարի, Չմշկածագ և Չարսանջակ, ահա պետական ճամփաների այն տրամագիծը, որ մեկնելով կենտրոն քաղաքներից, գալիս էր կանգ առնելու Դերսիմի լեռնային շրջանի սահմանների մոտերքի մոտ։ Շրջկենտրոններից դեպի Դերսիմի կենտրոնական մաս հաղորդակցության ճամփաները անբարեկարգ էին։

Հակառակ պետական այն օրենքին, որը պարտավորեցնում էր Թուրքիայի բոլոր քաղաքացիներին, 16 տարեկանից մինչև 60 տարեկանը, տարին 10 օր ճանապարհաշինական պարտադիր աշխատանքի կամ դրան համապատասխան նյութական փոխհատուցման, դրա համարժեքը գանձվում և մուծվում էր պետական գանձարան, բայց Դերսիմի լեռնաշխարհում խճուղիներ չէին շինվում, գյուղից-գյուղ, գյուղերից շրջկենտրոններ միայն արահետներ էին։ Խարբերդ-Խոզաթ, Խարբերդ—Բերրի և Բալու խճուղին օգտագործվում էր առավելապես զինվորական նպատակներով։ Գյուղերից դաշտերը, սարերն ու անտառները տանող արահետ-ճամփաները համատեղ ջանքերով շինում և նորոգում էին գյուղացիները։ Այդ գործին մասնակցում էին աշխատունակ բոլոր տղամարդիկ, բացառյալ թուրքի դեմ կռվելիս մարտերում զոհվածների ընտանիքները և ծերերը։

Մինչև վարչական կենտրոնները (քաղաքները կամ գյուղաքաղաքները) երկարող ճամփաների ուղղությունն ու տարածությունը հետևյալն էր։

Դեպի արևելք՝ Քղի-Կարին, Քղի-Մամախաթուն։

1. Քղիից Կարին լեռնային ճանապարհով 26 ժամ էր, բայց ճամփաների դժվարության, եղեղների պատճառով ոտքով կամ ձիով չորս օր էր տևում։ Առաջին օրը Քղիից պետք էր բարձրանալ Դոշմար սարը (որը տեղ-տեղ անտառածածկ և դժվարանցանելի էր), առանց հանելու լեռան գագաթը, թեքվել աջ և քայլել մինչև դեպի արևմուտ։ Ճամփան արահետ էր, մերթ իջնում էր ձորը և մերթ բարձրանում հանդիպակաց սարալանջը, երեկոյան հասցնում էր Մելիքան։ Գյուղ մտնելու համար պետք էր անցնել փայտե կամուրջը, այլապես ջուրը արագավազ և անանցանելի էր։ Մելիքան հայաբնակ գյուղը գտնվում էր երկու լեռների միջև, Դոշմար և Աժդահա սարերի միացման սարահարթում, մասնավոր իջևաններ գոյություն չունեին։ Տանտերերն էր կարգադրում օթևանելու հարցը և տալիս անհրաժեշտ պիտույքներ, եթե ճամփորդը կամ ճամփորդները ծանոթներ կամ բարեկամներ և կամ կապեր չունեին գյուղի բնակչության հետ։ Երկրորդ օրը՝ Մելիքանից բարձրանալ Աժդահա սարի սարալանջերը, անցնել գեղատեսիլ լեռնային արոտավայրերով, դիտել և դմայլվել բարացած հոտի, կթվորների ու հովվի շատ բնական և տպավորիչ բարբառներով ու դեռ չհասած լեռան գագաթի աժդահայի բարբարձանի բարձրությանը, անցնել աջ կողմի ձորից և իջնել վար, կրկին բարձրանալ մի նոր գագաթ և երեկոյան կանգ առնել Քղիի սահմաններից դուրս, Հելլեն նախկին հունաբնակ, այժմ բրդաբնակ գյուղում, ուր և գիշերել։ Երրորդ օրը՝ Հելլեն գյուղից դուրս գալով, բարձրանալ անտառածածկ խորդու լեռը։ Այստեղ ճամփան բաժանվում էր երկու մասի, առաջինը բարձրանում էր դեպի լեռան գագաթները, իսկ երկրորդը՝ աջակողմի սարահարթից իջնում հանդիպակաց ձորը, որը կարե-